


**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԸ
ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆ
Ակադեմիկոս**

Հայկական լեռնաշխարհը գտնվում է Առաջավոր Ասիայում՝ Երկրի այն



շրջաններից մեկում, որտեղ ձեւավորվել է գիտության մեջ «եվրոպեոիդ» կոչվող մարդաբանական տիպը, որի մի ճյուղը գերմանացի գիտնական Լուշանն անվանել է «արմենոիդ»:

Մարդաբանական այս միջավայրում է տեղի ունեցել հնադարյան մարդու կուլտուրայի

ձեւավորումը եւ հատկապես այստեղ եւն հետագայում առաջացել Արեւելքի առաջին քաղաքակրթությունները:

Քննելով հարցը կուլտուր-պատմական տեսանկյունից, նորագույն հետազոտություն-ները համոզիչ կերպով ապացուցում են, որ հնագույն ժամանակներից ի վեր Հայկական լեռնաշխարհի տարածքում եղել եւ անընդմեջ զարգացել է մեկ միասնական կուլտուրա: Գտնվելով հին աշխարհի քաղաքակրթությունների խաչմերուկում, Հայաստանն ստեղծել է բավական բարձր կուլտուրա, որը հիմք է ծառայել հետագա դարերի հայկական կուլտուրայի զարգացման համար: Այլ կերպ ասած, Հայկական լեռնաշխարհի մարդու կյանքում հայտնաբերվում է էթնիկական, տնտեսական եւ կուլտուրական գրեթե հինգ հազար տարվա (մինչեւ մեր թվականությունը եւ ընդհուպ մինչեւ մեր օրերը) ժառանգություն: Հայկական լեռնաշխարհը առաջավորասիական լեռնաշխարհների շարքում ընկած է Իրանական եւ Փոքրասիական լեռնաշխարհների միջեւ եւ լրիվ ընդգրկում է Սովետական Հայաստանի տարածքը, ներառյալ Փոքր Կովկասի ողջ լեռնային զանգվածը: Իսկ այդ անվանումը անցյալ դարի կեսին առաջարկել եւ առաջին անգամ օգտագործել է գերմանացի հայտնի երկրաբան ու Կովկասի հետազոտող Հերման Աբիխը (1806-1886): Շատ շուտով այն համընդհանուր ընդունելություն գտավ գիտության մեջ: Տերմինն ունի նաեւ պատմական արմատներ: Չէ որ դեռեւս պատմահայր Հերոդոտը (մ.թ.ա. 485-425) եւ Հեկատեոս Միլետացին (մ.թ.ա. 546-480) հիշատակել են լեռնաշխարհի մեջ մտնող Արմենական լեռնաշղթայի մասին, որտեղից սկիզբ է առնում Հայիս գետը (ներկայում Դզըլ Իրմակը, Փոքր Ասիայում): Հայկական լեռնաշխարհում է ընթացել հայ ժողովրդի պատմական կյանքը:

Հայկական լեռնաշխարհի տարածքը եղել է ոչ միայն հնադարյան մարդու բնակավայրը, մի բան, որ հաստատում են նրա գործունեության հետքերի բազմաթիվ գտածոները, այլև, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, միջանկյալ փուլ, այնտեղ բնակվող ցեղերի գաղթի պրոցեսների ընթացքում: Առաջավոր Ասիան գտնվում է Աֆրիկայից Ասիա եւ Եվրոպա տանող ճանապարհների խաչմերուկում, եւ հատկապես այդ պարագան հատուկ դեր է խաղացել ոչ միայն հնադարյան մարդու, այլև նրա մերձավոր ցեղակիցների տարաբնակեցման գործում: Ինչպես ցույց են տալիս երկրաբանական ուսումնասիրությունները, տասնյոթ միլիոն տարի առաջ, այն բանից հետո, երբ ցամաքել է Աֆրիկան ու Ասիան միմյանցից բաժանող Թեոխս ծովը, առաջացել է մայրցամաքային մի կամուրջ, որի վրայով այլ կենդանիների հետ մեկտեղ հարավից հյուսիս եւ այնուհետեւ դեպի արեւելք գաղթել են նաեւ մարդանման կապիկները: Ավելի ուշ, մոտավորապես մեկ միլիոն տարի հետո, կատարվել է մեկ այլ, այս անգամ արդեն նախամարդկանց գաղթը, որոնք աֆրիկյան նախահայրենիքից շարժվել են դեպի հյուսիս: Նրանք Եվրոպա են եկել երկու հիմնական ուղղությամբ՝ Ջիբրալթարով եւ Անդրկովկասի ու Կովկասի վրայով: Այսպիսով, ժամանակակից Հայաստանի տարածքով է անցել հեռավոր անցյալի մարդկանց մեծ գաղթի մայրուղիներից մեկը: Միեւնույն ժամանակ, նրանց մի մասը հիմնավորվել է այստեղ. մարդն ապրել ու յուրացրել է իր համար նոր տարածք:

Սկսած 1906 թվականից, ֆրանսիացի հետազոտող ու ճանապարհորդ Ժակ դը Մորգանի առաջին գտածոներից մինչեւ մեր օրերը, Հայաստանի տարածքում հայտնաբերվել են պալեոլիթի մարդու նյութական գործունեության բազմաթիվ հետքեր՝ զանազան քարե գործիքներ, կացարաններ, ժայռապատկերներ եւ այլն: Այս ամբողջ հսկայական նյութը հնարավորություն է ընձեռում հետեւելու պալեոլիթի բավական զարգացած կուլտուրային մի մեծ ժամանակահատվածում՝ հին շելյան կուլտուրայից (550 հազար տարի առաջ) մինչեւ մուստերյանը (100-40 հազար տարի առաջ):

Ժամանակակից լեզվաբանությունը խորանալով հնդեվրոպական ժողովուրդների լեզվաբանականի ծագման հարցերի մեջ, եկել է մի շարք կարեւոր եզրահանգումների, որոնք ուղակիորեն կապված են նաեւ հայ ժողովրդի ձեւավորման խնդրի հետ: Վերջին տարիներին սովետական գիտնականներ Թամազ Գամդրեյիձեն ու Վյաչեսլավ Իվանովը առաջ են քաշել մի նոր տեսություն, որի համաձայն հնդեվրոպական լեզվով խոսողները մ. թ. ա. V եւ IV հազարամյակների սահմանագծում ապրել են Հայկական լեռնաշխարհում:

Գիտնականները համոզիչ փաստարկներ են բերել հօգուտ իրենց դրույթի, հենվելով լեզվաբանական, պատմական, հնագիտական հսկայական նյութի վրա, օգտագործելով հնագույն ժամանակների վերաբերյալ շատ այլ գիտությունների տվյալները: Սա հնարավորություն է ընձեռում այլ կերպ դիտել հայերի ազգածնության պրոբլեմը: Պարզվում է, որ այն հեռավոր

Ժամանակաշրջանում է ծագել լեզվաբանների կողմից վերակառուցված նախահայերենը, որի անմիջական ժառանգորդը մեր ժամանակակից հայերենն է, որում եւ մանավանդ նրա բարբառներում զարմանալիորեն մինչեւ օրս էլ պահպանվել են այդ հնագույն լեզվի հետքերը: Գիտության տվյալները ցույց են տալիս, որ ոչ միայն հայոց լեզուն է համարվում հնդեվրոպականի անմիջական ժառանգորդը, այլև հայերն իրենք առաջին հնդեվրոպացիների անմիջական ժառանգորդներն են: Մ.թ.ա. V-IV հազարամյակներին (երբ կազմավորվել է եվրոպեոիդ ցեղի մարդաբանական տիպը) վերաբերվող տվյալները վկայում են, որ նրա ամենատիպիկ ներկայացուցիչները հայերն են: Այդ ժամանակաշրջանում Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի, Հյուսիսային Սիջագետքի եւ Իրանական սարահարթի հյուսիս-արեւմտյան հսկայածավալ տարածքում ապրել են ցեղեր, որոնք խոսել են հնդեվրոպական նախալեզվով: Արդեն այն ժամանակ տեղի էր ունենում ազգակից բարբառների տարանջատման գործընթացը, որոնց հիման վրա այնուհետեւ առաջացան հնդեվրոպական լեզուները: Նյութական բազմաթիվ վկայությունները, լեզվական փաստերը, հնագույն առասպելներն ու ավանդությունները, այս ամենը ժամանակակից գիտությանը հիմք են տալիս ամենայն համոզվածությամբ ապացուցել, որ հայերը Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկներ են եղել: Անշուշտ, շատ հետաքրքիր է, թե «նախահայերը» ինչ կուլտուրա են ունեցել, ինչպես են վարել իրենց տնտեսությունը:

Հնդեվրոպական ցեղերի, ուրեմն եւ «նախահայերի» կենցաղում մեծ տեղ է գրավել երկրագործությունն ու անասնապահությունը: Իր ժամանակին ակադեմիկոս Ն.Դ.Վավիլովը ուսումնասիրելով կուլտուրական բույսերը, ապացուցեց, որ վայրի ցորենի հայրենիքը, հետեւաբար եւ երկրագործության կենտրոնը, որտեղ մարդն առաջին անգամ սկսեց դրանք կուլտիվացնել, համարվում են լեռնային շրջանները: Նա այդպիսի համաշխարհային կենտրոններից էր համարում Հարավային Կովկասի շրջանները եւ Հայկական լեռնաշխարհը: Հայկական լեռնաշխարհի տարածքում եղել են նաեւ պղնձի, անագի ու երկաթի հնագույն մշակման կենտրոններ, որոնք հանգեցրել են էնեոլիթին (պղնձաքարի դարին) եւ բրոնզի դարին (մ. թ. ա. IV-III հազարամյակ): Հենց այս շրջանում էլ սկսվել են երկաթի հանքավայրերի մշակումները, որով նշանավորվեց երկաթի դարի մուտքը մարդկային պատմության մեջ:

Ինչպես պնդում է անգլիացի հետազոտող Ու. Օլքոթը, Հայկական լեռնաշխարհի հետ է կապված մ. թ. ա. III հազարամյակում կենդանակերպի 12 համաստեղությունների մասին ծնված հասկացությունը, որը հիմք դրեց օրացույցի արեգակնային համակարգի զարգացմանը: Այստեղ են առաջացել նաեւ Մեծ Արջի, Բագումքի եւ Օրիոնի (վերջինս հայերն անվանում են նաեւ Հայկ, հայերի առասպելական նախահոր անունով) համաստեղությունների անվանումները: Արեգակնային օրացույցի հիման վրա հայերը ստեղծեցին ժամանակագրական հաշվում,

դեկլարվելով Հայաստանում օգտագործվող 1460 տարեկան շրջանով, որը հայտնի էր որպես «Հայկեան շրջան»:

Համաձայն հայկական ժամանակագրության, 428 թվականի Նավասարդի 1-ին (օգոստոսի 11-ին), ավարտվել է «Հայկեան» երկրորդ շրջանը, որն սկսվել էր մ. թ. ա. 1032 թվականին: «Հայկեան առաջին շրջանը» համապատասխանաբար սկսվել է մ. թ. ա. 2492 թվականին: Ըստ մեզ հասած պատմական ավանդության, այդ թվականի Նավասարդի 1-ին հայ ժողովրդի առասպելական նախահայր Հայկը մարտնչել է ասորեստանցիների առաջնորդ Բելի դեմ և սպանել նրան: Ավանդությունը հատկապես այդ իրադարձությամբ է թվագրում հայերի գոյության սկիզբը Հայաստանում: Որքան էլ մենք վերապահորեն մոտենանք ավանդությունների, առասպելների վկայություններին, չենք կարող անտեսել այն հանգամանքը, որ դրանք զարմանալիորեն համապատասխանում են գիտության տվյալներին և սկզբունքորեն կարող են լրացուցիչ փաստարկ լինել հօգուտ հայ ժողովրդի բնիկ լինելու դրույթի:

Առանձին ազգակից բարբառներից առաջանում էին հնդեվրոպական ցեղերի լեզուները: Առաջավոր Ասիայի նշված շրջանում դրանց կրողներն էին հույները և հայերը: Մինչև մեր օրերը չապրեցին մի շարք ժողովուրդներ, որոնք հնագույն քաղաքակրթությունների ստեղծողներն էին: Խեթերի, լուվիացիների լեզուները միայն բազմաթիվ հետքեր թողեցին հունարեն, հայերեն, իրաներեն և հնդկերեն լեզուներում: Նշված լեզուներով խոսողների մեջ կենտրոնական տեղ էին գրավում մեր ժողովրդի նախնիները, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհում: Հայկական լեռնաշխարհում և նրա հարավային ծայրամասը հանդիսացող Վերին Միջագետքում հնդեվրոպական հնդկաարիական ցեղերը ստեղծեցին Միտաննի պետությունը, որն իր հզորության գագաթնակետին հասավ մ. թ. ա. XVI-XV դդ.: Միտաննացիների հիմնական մասը խոսում էր հնդիրանական լեզվով ու սրանցից էր սերում անտիկ ժամանակաշրջանում հայտնի մատիենների ցեղը (հին հայկական աղբյուրների «մատեանք»-ը): Միթրա, Վարունա, Ինդրա, Մարութա աստվածությունները երկրպագող արիական-հնդիրանական ցեղերը Միտաննի պետությունից տարածվել են դեպի արևելք՝ Իրանական սարահարթը և Հնդկաստան: Դ-ա տեղի է ունեցել մ. թ. ա. շուրջ XVII-XII դարերի միջև: Ուշ շրջանում մեզ հայտնի է Մատիանա կամ Մաննա երկիրը Կասպուտան (Ուրմիա) լճի ավազանում և նրանից արևելք, մինչև Երասխ կամ Արասխ գետը (կոչվում էր նաև Ռ-ահ, հույները կոչում էին Արաքս) և Կասպից ծովը: Հնդկաարիական ցեղերի տեղաշարժը արեւմուտքից արեւելք ցույց է տալիս կասպ ցեղի տարածման սահմանները: Անտիկ ժամանակաշրջանում՝ հույն-մակեդոնական արշավանքների ժամանակ նրանք բոլոր այդ տեղերում, մինչև Ինդոս գետը հանդիպեցին Կասպ անունը կրող ցեղերին, որոնց անունով կոչվեց նաև նրանցից հյուսիս գտնվող ծովը՝ «Կասպից (Կասպիական) ծով»: Ահա այս տարածքում՝ Կասպից ծովից մինչև Հնդկաստան, հնդկաարիացիները ստեղծեցին իրենց էպոսը՝ հանրահայտ «Ռիգվեդան» և

«Ավետստան», որտեղ աղոտ հիշողություններ են պահպանվել նրանց նախնական բնակության երկրում հոսող Երասխ կամ Ռահ (Արաքս) գետի մասին՝ «Ռասա» («Ռիզվեդայում») և «Ռահա» («Ավետստայում») անունով: Իսկ երբեմնի Միտաննի թագավորության տարածքում ձեռավորվող հայ ժողովրդի հիշողության մեջ մնաց Վարհագնի կամ Վահագնի պաշտամունքը, (որ կապվում է գենդական «Վերաթրագնայի» հետ), ինչպես և հայկական էպոսի հայտնի Մարութա սարը: «Ավետստան» առաջացել է Ռիզվեդայից ու շարժվել «Արյանամ» երկրում. այսպես էր կոչվում այն ժամանակ Իրանը (հայկական աղբյուրներում՝ «Արիք»): Հայկական լեռնաշխարհից սրանք տարել էին սրբազան շների՝ «արալեզների» պաշտամունքը: Հնդկաստանից գեղերը Իրանական սարահարթից տարածվել են դեպի Միջին Ասիա և Հյուսիսային Կովկաս, իսկ այնտեղից՝ ավելի հյուսիս: Նշված հյուսիսային երկրներում հնդկաստանից գեղերից պետք է որ առաջանային սկյութական և սարմատական գեղերը, որոնք հարավում շփման մեջ էին իբերակովկասյան գեղերի հետ: Ինչպես տեսանք, հնդեվրոպացիների մի մասը տեղաշարժվել է Հայկական լեռնաշխարհից դեպի արևելք, հարավ-արևելք, և հյուսիս-արևելք: Այժմ տեսնենք հնդեվրոպացիների նախնիների մյուս մասի տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհից դեպի արևմուտք՝ դեպի Փոքր Ասիա և Բալկաններ: Մեզ հասած կցկտուր տվյալները հնարավորություն են տալիս վեր հանել այդ էթնիկական միավորները: Դրանք էին՝ փռյուգիացիների, թրակացիների և հույների նախնիները, որոնց լեզուների հետ սերտ առնչություններ ունին հայերենը: Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ Վանա լճից հարավ գտնվող Կորդվաց աշխարհը՝ հունական աղբյուրների Կորդուենեն և այնտեղ բնակվող գեղը անտիկ աղբյուրներում կոչվում է «Գորդիենեն», որ Մոկաց աշխարհի մոկաց գեղը (մոկսենները) գոնե անտիկ ժամանակաշրջանում բնակվելիս է եղել Փոքր Ասիայում՝ Կարիայի և Լյուկիայի միջև: Անտիկ աղբյուրներից մեզ հայտնի է նաև փռյուգիական արքայատոհմի հիմնդիր Գորդիոսը, որը Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասում, Սանգարիոս գետի հովտում հիմնել է Գորդիոն մայրաքաղաքը: Մենք ավելի պերճախոս ապացույցներ էլ ունենք: Գեռես ակադեմիկոս Ն. Մառը ուշադրություն էր դարձրել, որ փռյուգիացիների գլխավոր աստվածը կոչվել է «Մաբաճիոս» և կապ ունի հայերեն «աստված» բառի հետ: Այս եզրակացությունը առնչվում է վերջերս լուսաբանված այն փաստի հետ, որ Մուսասիրի տաճարում գտնվող Խալդի աստվածը ուրարտական արձանագրություններից մեկում կոչվում է «աշտիուծի»: Իսկ եթե հիշենք, որ փռյուգիական գորդիացիների գեղը կոչվել է նաև «Էրետրիացիներ», որը առնչվում է Ուրարտուի կամ Ուրատրի երկրանվան հետ, պարզ կդառնա, որ փռյուգիացիների նախնիները դեռես քիսայնական թագավորության կազմավորումից առաջ բնակվելիս են եղել Կորդվաց-Գորդիացվոց աշխարհում: Մրանցից հյուսիս բնակվելիս են եղել Մոկաց աշխարհի տեղաբնիկները՝ մոկսենները, որոնց անունը կապվում է

«Մուշկ» ցեղանվան հետ: Ավելի հյուսիս գտնվում են Հայոցճորն ու Ըռըշտունիքը ու Վան-Տոսպը՝ հետագայում առաջացած Ուրարտուի թագավորության կենտրոնը:

Նշված տեղանունները եւ ցեղանունները առնչվում են հայկական ավանդությունների՝ Հայկ նահապետի գործունեության վայրերի հետ: Ավելին՝ հնչյունաբանական փոփոխությունների օրինաչափությունները հնդեվրոպական լեզուներում եւ առաջին հերթին հայերենում ցույց են տալիս, որ «հայ» (հայերենի որոշ բարբառներում՝ «խայ») ցեղանունը պետք է առաջացած լինի նախնական «Հատիոս» կամ «Խատիոս» ցեղանունից: Եթե այդ կռահումը ճիշտ է, ապա ստացվում է, որ մեր ժողովրդի «հայ» կամ «խայ» ինքնանունը կապ ունի փռյուգիական «Հատիոս» աստծո անվան հետ, այստեղից էլ՝ Կոտայքում գտնվող «Հատիս» լեռան անունը: Փռյուգական մեռնող եւ հարություն առնող Հատիսը լրիվ համապատասխանում է հայկական հեթանոսական պանթեոնի՝ Արայի պաշտամունքին, ուստի պատահական չպետք է համարել, որ Հատիսից դեպի արեւմուտք գտնվում է Արայի լեռը: Հետաքրքիր է, որ փռյուգիական Հատիսի մայրը՝ Նանե աստվածուհին էր, որի պաշտամունքը լայն տարածում ուներ հեթանոսական Հայաստանում:

Ըստ Մովսես Խորենացու բերած ավանդությունների, Հայկ Նահապետի գործունեության վայրը Հայոցճոր գետի հովիտն է, եւ պատահական չպետք է համարել, որ այստեղ է տեղադրվում ուրարտական «Հայադու» գավառը: Վերջինիս դիմաց, Վանա լճի հյուսիս-արեւմտյան ափերին գտնվող «Հայադունի» գավառի անունը նույնպես «հայ» ցեղանվան հետ է կապվում եւ առասպելական Հայկի գործունեության վայրերից մեկն է Հայադունիին կից Հարք գավառը իր Հայկաշեն բնակավայրով: Հայոց ճորում էր եւ «Հայք» կոչված ամրոցը, որով այնուհետեւ կոչվեց Հայոց երկիրը:

Փռյուգիացիները ասուրա-բաբելական եւ ուրարտական արձանագրություններում հիշվում են «մուշկ» անունով, որով այն կապվում է «մոկս», «մոկսեն» ցեղանվան հետ (մոսկ, մոսկեն): Ըստ արձանագրությունների, Մեծ Չավ գետի հովտումն էր գտնվում Կումե կամ Կումենու սրբավայրը, եւ այստեղի բնակիչները արձանագրություններում կոչվում էին «կումենցիներ» կամ «ուկումեացիներ»: Ահա այս մուշկերը, ասուրա-բաբելական արձանագրությունների համաձայն, խեթական թագավորության անկման նախօրեին գրավեցին Հալիս գետի հովիտը, որն այնուհետեւ այդ նույն արձանագրություններում կոչվեց «Մուշկենու», իսկ նրանց կողքին բնակվող հայերի նախնիների «Հատիո» անունը արդեն կապվում էր «հաթ», այսինքն խեթ ցեղանվան հետ: Այս կողմերում էր գտնվում (Հալիս գետի ակունքներում եւ վերին Եփրատի հովտում) Հայասա երկիրը, որը ձեւավորվող հայ ժողովրդի հիմնական ցեղերից մեկի հայրենիքը պետք է դառնար: Մենք ունենք նաեւ Մովսես Խորենացու «Պատմություն հայոց»-ում բերվող «ազգն սկայից» արտահայտությունը, որը ճիշտ չի հասկացվել բանասերների

կողմից: Սկայերը պետք է լինեին փոյուզիական ցեղերից մեկը: Մրանց մասնակցել են Տրոյայի-Իլիոնի պատերազմներին եւ Հոմերոսի մոտ նրանց անունով այդ քաղաքի դռներից մեկը կոչվել է «դրոնք սկայից»: Փոյուզիական սկայի ցեղի հետ պետք է կապել նաեւ հայկական առաջին թագավոր Պարույրի (շուրջ 670-612 թթ. մ. թ. ա.) հոր՝ Սկայորդու անունը: Հիերոգլիֆ-լուվիերեն արձանագրություններում հիշատակվում է «Հայ», իսկ դրանից առաջ սեպագիր խեթերենում՝ «Հայասա» երկիրը: 2-րդ հազարամյակի սկզբներին Փոքր Ասիայի հարավարեւելքում հիշատակվում են դանայացիները («դանունա»), իսկ նրանցից հյուսիս՝ պելասգները կամ պելաստները (այդ ցեղը պահպանվել է Պլասթա, հետագայում՝ Ալբիստան անվան մեջ): Այստեղ էր գտնվում Կոմանա սրբավայրը (անտիկ շրջանի «Կոմանա Կապադովկիոյ»), որն այդպես էր անվանվել ի հիշատակ Մեծ Չավ գետի հովտի սրբավայրի:

Այս ժամանակաշրջանում, երբ խեթական պետությունը հասել էր իր հզորության գագաթնակետին, Վանա լճից հարավ դեռեւս գոյություն ունեին հայերին հարեւան փոյուզիացիների նախնիները՝ գորդիացիները: Մրանց երկիրը հույն-հռոմեական աղբյուրների «Գորդիենե» երկիրն է՝ հայկական աղբյուրների «Կորդվաց աշխարհը», «Կորդուքը»: Այս գորդիացիները-մուշկերը ձուլվեցին ձեւավորվող հայ ժողովրդին: Մուշկերը կազմում էին ազգաբնակչության ամենաստորին, շահագործվող խավը եւ հայերի մոտ կոչվում էին «մշակ» (ասուրա-բաբելական աղբյուրներում՝ «մուշկենու»): Մրանց սոցիալական դրությունը հավասար էր ստրուկների վիճակին: Ծիշտ այնպես, ինչպես քիչ հետո, երբ կազմավորվեց Բիայնիլի պետությունը՝ «Ուրուրդա» հորջորջումով հայտնի հայկական ցեղերի անունով ասուրա-բաբելական արձանագրություններում երկիրը կոչվեց Ուրարտու: Հետաքրքիր է, որ ուրարտական արձանագրություններում բացակայում է «Ուրարտու», ինչպես եւ «Նաիրի» անունը: Եկվոր ցեղերը իրենց պետությունն անվանում են «Բիայնիլի» կամ «Բիայնա», որի հայկական ձեւն է «Վան»-ը: Իսկ ասուրա-բաբելական արձանագրություններում երկիրը (Հայկական լեռնաշխարհը) նախկինի պես կոչվում էր Ուրարտու՝ կամ Ուրաշտու, որը պետք է առաջացած լինի Վան քաղաքից հարավ գտնվող հայերենում «Ըռըշտունիք» կամ «Ռշտունիք» կոչված գավառի անունից (վերջինս պետք է իր մեջ ընդգրկեր նաեւ Տուշպա (Տոսպ) մայրաքաղաքի տարածքը): Ուրարտու կամ Ուրաշտու երկրանունը եբրայեցիները՝ Հին կտակարանում հիշատակում են «Երկիր Արարատայ» կամ «Արարատ» անվան տակ, որը իրականում Հայաստան երկրի անուններից մեկն էր: Իշխող վիճակում մնաց «սկայ» ցեղը, որից առաջ եկավ «Սկայորդու» արքայատոհմը, որը թագավորեց իբրեւ առաջին Հայկական թագավորության արքայատոհմ: Այս արքայատոհմի բարձրացումը պետք է տեղի ունենար մ. թ. ա. 681 թվականից հետո:

Փոյուզիացիները թրակիացիների հետ հասան մինչեւ Մարմարա ծովը եւ Բալկանյան թերակղզին, որի հարավային մասում գերիշխող էին դարձել հելլենները: Հայերը նրանց կոչում են «յոյնք», որ առաջացել է Փոքր Ասիայի «Յոնիա» երկրանունից: Հույների հետ ձուլվեց «ախայոյ» կոչվող ցեղը, որի

«խայ» արմատը պետք է առնչվի «հայ» կամ «խայ» ցեղանվան հետ: Հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին մեր առաջադրած վարկածն իր ապացույցն է գտնում Հին կտակարանում, որի համաձայն Առաջավոր Ասիայի ժողովուրդների առաջացումը կապվում է ջրհեղեղի ավանդության հետ: Մ. ք. ա. 1-ին հազարամյակում եբրայեցիները գրի առան Առաջավոր Ասիայի հնուց տարածված ջրհեղեղի ավանդությունը, ըստ որի Նոյի տապանը կանգ է առել Արարատի վրա, որը Միջագետքից հյուսիս գտնվող ամենաբարձր գագաթն է: Ըստ այդ ավանդության, ջրհեղեղից հետո տապանից իջել են ինքը՝ Նոյ նահապետը եւ իր Յաբեթ, Սեմ եւ Քամ որդիներն ու նրանց ընտանիքները: Սրանցից էլ առաջացել են Առաջավոր Ասիայի ժողովուրդները: Ինչպես գրված է «Ծննդոց գրքում»՝ Նոյի որդիներից «սփռեցան, կղզիք ազգաց ի վերայ երկրի յետ ջրհեղեղին»: Այդ ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայի ժողովուրդների մոտ գոյություն ուներ այն պատկերացումը, որ մարդկությունը ներկայացնում էր «ազգ մի եւ լեզու մի ամենեցուն» (Գիրք ծննդոց, գլ. ԺԱ), «եւ էր ամենայն երկիր լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն»: Ըստ այդ ավանդության լեզուները բաժանվեցին Բաբելոնի աշտարակաշինությունից հետո: Մովսես Խորենացին, հետեւելով այս ավանդությանը, հաղորդում է, որ հայերը առասպելական Հայկ նահապետի գլխավորությամբ եկել էին Հայոց երկիրը Բաբելոնից եւ բնակություն էին հաստատել Վանա լճի հարավարեւելյան եւ հյուսիսային մասերում - այն երկրամասերում, որոնք ուրարտական արձանագրություններում կոչվում էին «Հայադու» (Հայկական Հայոցձոր) եւ «Հայդունի»: Հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում՝ Հայկական լեռնաշխարհում գերիշխող էթնիկական ծառը բաղկացած էր փոյունգիացիների ու քրակիացիների լեզուներին ազգակից հայերենով խոսող նախահայկական ցեղերից, որոնք պետք է համառ պայքար մղեին հարավարեւելքից անընդհատ ներթափանցող խուրրի-ուրարտական ցեղերի դեմ: Վերջիններիս բնակության վայրը՝ Չագրոսյան լեռնային հատվածը, հարեւան էր Միջագետքին, ուստի ասուրա-բաբելական՝ աքքադացիների ու բաբելացիների աղբյուրները ինչպես Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներին, որ հայտնի էին «ուրուրդրա» անունով, սրանց եւս կոչում էին այդ նույն ցեղանվան տարբերակով՝ «ուրարտ» ուրարտացի: Հայկական լեռնաշխարհի թափանցող ցեղերը մ. ք. ա. 2-րդ հազարամյակի վերջերին եւ 1-ին հազարամյակի սկզբներին ապրում էին ռազմական դեմոկրատիայի եւ վաղդասակարգային հասարակության զարգացման փուլը: Սրանց դիմադրում են տեղական ցեղերը, որոնցից սերում է Արամե թագավորը: Վանա լճի հյուսիսային եզրին, Արամայրալի երկրում էր գտնվում նրա մայրաքաղաքը՝ Արգաշկուն (ուշ ժամանակների Արժկեն) մ. ք. ա. 860-840-ական թթ.: Այս անունը ասուրա-բաբելական արձանագրություններում կարդացվում է տարբեր ձևերով՝ «Ատմաիլի», «Արմիրալիու», սակայն աներկբայելի է «Արամ» արմատը, որ ձեւավորվող հայ ժողովրդի երկրորդ անունն է: Արամի ստեղծած թագավորությունը երկար կյանք չունեցավ: Բիսյնական ռազմական վերնախավը չդիմադրեց ասորեստանցիների

ագրեսիային: Սալմանասար I-ը (859-824) պատերազմների ժամանակ (մ. թ. ա. 859, 857, 745 թթ.) խիստ դիմադրության հանդիպեց Արամեի կողմից, վերջինս ուժասպառ լինելով, տեղի տվեց բիայնացիներին: Հայկական այս թագավորությունը ընկավ բիայնացիների գերիշխանության ներքո: Ասուրաբաբելական արձանագրություններից իմանում ենք, որ իշխանության գլուխ եկավ նոր արքայատոհմ: Դա բիայնական Լուտիպրիսի տոհմն էր, որ եկել էր Մուսասիր քաղաքից դեպի Տուշպա-Վան:

Հայկական լեռնաշխարհում բիայնական արքայա-տոհմի գերիշխանության ժամանակ հիմնական բնակչությունը կազմել են հայկական ցեղերը, որոնցից դուրս եկած արքայատոհմը մ. թ. ա. VII դ. կեսերից գլխավորեց հայոց թագավորությունը ի դեմս Սկայորդու որդու Պարույրի (մ. թ. ա. 681 թ.) եւ նրա հաջորդների: Բիայնացիները մշտապես ուժացվել են հայկական ցեղերի կողմից: Այն, որ հայերը եղել են առավել զարգացած եւ քանակապես գերակշիռ ազգագրական խմբավորում, վկայում է հետեւյալը՝ մ. թ. ա. 590 թվականին բիայնական վերջին արքայատոհմի անկումից անմիջապես հետո բիայնական ժողովուրդն ասես անհետացավ, բայց իրականում նա այնպես էլ չհասցրեց կազմավորվել որպես առանձին ժողովուրդ: Բիայնական արքայատոհմի անկումից հետո սկզբնադրյուրները բիայնացիների փոխարեն հիշատակում են արմեններին, որոնք իրենց կոչում էին հայեր: Չափազանց արագ, գրեթե անմիջապես, հին պետության ավերակների վրա, ասես Բիայնայի ներսում հասունանալով ու նրան կուլ տալով, ծագեց մի ընդարձակ նոր պետություն: Հարեւաններն այն անվանում էին Արմինա կամ Արմենիա: Երիտասարդ Հայկական պետությունը հարկադրված էր իր դիրքերն ամրապնդելու համար ռազմական ընդհարումներ ունենալ ինչպես մարական, այնպես էլ հին պարսկական թագավորությունների հետ: Մ. թ. ա. 519 թվականին Պարսկաստանը նվաճում է Հայկական պետությունը եւ այն դարձնում հատուկ սատրապություն, «Արմինա» անվամբ: Հունամակեդոնական նվաճումներից հետո, հելլենիստական դարաշրջանում հայ ժողովրդի ձեւավորման պրոցեսը ավարտվել էր: Արմավիրում գտնված մ. թ. ա. II դարի հունական մի արձանագրության մեջ Արարատյան հովիտն անվանված է «գեղեցիկ երկիր Արմենիա»: Այրարատ նահանգը, որի անունը տարբերակն է Ուրարտու անվան, դառնում է ողջ Հայաստանի տնտեսական, քաղաքական եւ կուլտուրական կենտրոնը: Հետագայում տեղի է ունենում Հայաստանի բոլոր մասերի միաձուլում մի միասնական պետության մեջ, որը հայտնի է Մեծ Հայք անվամբ, ի տարբերություն մերձպոնտական Հայաստանի, որը կոչվում էր Փոքր Հայք: Հելլենիստական եւ վաղ ֆեոդալական դարաշրջանի Հայկական պետությունը մոնոթեոսիկ քաղաքական կազմավորում էր: Հույն գիտնական, աշխարհագրագետ Ստրաբոնը, որն ապրել է մինչեւ մեր թվականության I դարի սկզբները, հավաստում է, որ իր ժամանակներում Հայաստանի բոլոր շրջանները խոսել են մի լեզվով՝ հայերենով:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ ամսագիր, N4, 1985 թ.

The Armenian Homeland

Academician Souren Yeremian

Summary

The Armenian plateau is homeland for the white race, which is called Europoid by anthropologists, and Armenians (according to German scientist Von Luschan belong to Armenoid race) are originated in that region.

The first human civilization has been created there and during the course of history a unique culture has been continuing to exist in the same region. Academician Yeremian demonstrates that migration and diffusion of Europeans has been first happened in their original homeland, The Armenian plateau.

خاستگاه قوم ارمن

آکادمیسین سورن یرمیان

چکیده مقاله

فلات ارمنستان در بخشی از آسیای مقدم واقع است که از نظر علمی نژاد یورپوئید که شاخه ای از آن را لوشان دانشمند آلمانی آرنوئید نامیده است و ارمنیان به آن تعلق دارند، از آنجا برخاسته است. تشکیل فرهنگ باستانی انسان بویژه نخستین تمدن شرقی در همین ناحیه روی داده است. در طول ادوار مختلف تاریخ یک تمدن منسجم و واحد در این منطقه پدید آمده و دوام آورده است.


آکادمیسین یرمیان با استفاده از نظریات دانشمندان مختلف و بر پایه منابع تاریخی باستان نشان می دهد که موطن اصلی قوم ارمن در فلات ارمنستان واقع بوده مهاجرت کلیه اقوام موسوم به هندواروپایی از همین موطن مشترک صورت گرفته است.

The Early History of Indo-European Languages

by [Thomas V. Gamkrelidze and V. V. Ivanov](#)
Scientific American, March 1990, P.110

THOMAS V. Gamkrelidze and V. V. IVANOV are the authors of *The Indo-European Language and the Indo-Europeans*, a two-volume work published in Russian in 1984; an English version is published by Mouton de Gruyter. Gamkrelidze directs the Tsereteli Institute of Oriental Studies in Tbilisi and is a professor of linguistics at Tbilisi State University. Ivanov is professor of linguistics and chair of the department of Slavic languages at the Institute for Slavic and Balkan Studies in Moscow. The authors wish to thank Gerard Piel, chairman emeritus of Scientific American, for helping to prepare this article for publication.

Family Tree Of The Indo-European Languages





The common ancestor of these languages has been traced to Asia rather than to Europe, the authors say. The once-clear distinction between the family's Eastern and Western branches is now blurred



Migrations and Cultural Diffusion carried the Indo-European protolanguage from the homeland, which the authors place in the Transcaucasus (see *Historical Armenia maps*), and fragmented it into dialects. Some spread west to Anatolia and Greece, others southwest to Iran and India. Most Western languages stem from an Eastern branch that rounded the Caspian Sea. Contact with Semitic languages in Mesopotamia and with Kartvelian languages in the Caucasus led to the adoption of many foreign words.



The pulling wagons or carts from the Armenia's State History museum, dating back to second millenium B.C. from digsite at Lchashen, near lake Sevan, oldest in its kind and extremely rare because of its relatively good condition and preservation.

The Indo-European Superfamily of Languages

Linguistics, the scientific study of language, can reach more deeply into the human past than the most ancient written records. It compares related languages to reconstruct their immediate progenitors and eventually their ultimate ancestor, or protolanguage. The protolanguage in turn illuminates the lives of its speakers and locates them in time and place.

The science developed from the study of *the Indo-European superfamily of languages*, by far the largest in number of languages and number of speakers. Nearly half of the world's population speaks an Indo-European language as a first language; six of the 10 languages in which Scientific American appears—English, French, German, Italian, Russian and Spanish—belong to this superfamily.

Over the past 200 years, linguists have reconstructed the vocabulary and syntax of the postulated Indo-European protolanguage with increasing confidence and insight. They have tried to unravel the paths by which the language broke into daughter languages that spread throughout Eurasia, seeking at the origin of those paths the homeland of the protolanguage itself. The early investigators placed the homeland in Europe and posited migratory paths by which the daughter languages evolved into clearly defined Eastern or Western branches. Our work indicates that the protolanguage originated more than 6,000 years ago *in eastern Anatolia* and that some daughter languages must have differentiated in the course of migrations that took them first to the East and later to the West.

The reconstruction of ancient languages may be likened to the method used by molecular biologists in their quest to understand the evolution of life. The biochemist identifies molecular elements that perform similar functions in widely divergent species to infer the characteristics of the primordial cell from which they are presumed to have descended. So does the linguist seek correspondences in grammar, syntax, vocabulary and vocalization among known languages in order to reconstruct their immediate forebears and ultimately the original tongue. Living languages can be compared directly with one another; dead languages that have survived in written form can usually be vocalized by inference from internal linguistic evidence. Dead languages that have never been written, however, can be

reconstructed only by comparing their descendants and by working backward according to the laws that govern phonological change. Phonology—the study of word sounds—is all-important to historical linguists because sounds are more stable over the centuries than are meanings.

Early studies of Indo-European languages focused on those most familiar to the original European researchers: the Italic, Celtic, Germanic, Baltic and Slavic families. Affinities between these and the "Aryan" languages spoken in faraway India were noticed by European travelers as early as the 16th century. That they might all share a common ancestor was first proposed in 1786 by Sir William Jones, an English jurist and student of Eastern cultures. He thus launched what came to be known as the Indo-European hypothesis, which served as the principal stimulus to the founders of historical linguistics in the 19th century.



Armenia's State Museum, in Yerevan's Republic Square, houses thousands of artifacts of early Indo-European culture found throughout the territory of Armenia. The collection, biggest in the world in its number and variety has many artifacts dating back to as far as Stone Age. One of the treasures of the museum are carts, or pulling wagons, dating back to early second millenium BC. The wagons along with hundreds of other artifacts such as spears, swords, arrowheads and pottery, were found from the archaeological dig at Lchashen, near Lake Sevan. The wagons for the most part have been preserved from the elements and are relatively in good condition. They are the oldest surviving carts of such sort in the world.

Grimm's Law of Lautverschiebung ("Sound Shift")

